«Աջակցություն որակի ենթակառուցվածքներին Հայաստանում»

Ֆինանսավորում է ԵՄ-ն, իրականացնում՝ ՄԱԱԶԿ-ը

ԼՐԱՏՈՒ ԱՊՐԻԼ 2023

Առևտրի մրցունակության և արդյունաբերության զարգացման կարիքների վրա հիմնված չափագիտության համակարգ Հայաստանում

28 ապրիլ, 2023 - «Աջակցություն որակի ենթակառուցվածքներին Հայաստանում» ծրագիրը, որըֆինանսավորում է Եվրոպական միությունը (ԵՄ) և իրականացնում ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (ՄԱԱԶԿ), Հայաստանի էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ կազմակերպել են չափագիտության կարիքների գնահատման համատեղ աշխատաժողով պետական և մասնավոր հատվածի շուրջ 50 ներկայացուցիչների մասնակցությամբ:

Որպես ներառական գործընթացի մաս, աշխատաժողովի նպատակն էր ազգային շահագրգիռ կողմերին ներկայացնել իրավական և արդյունաբերական չափագիտության կարիքների գնահատման հիմնական բացահայտումները, բացթողումները, առաջարկությունները և վավերացում ստանալ առաջարկվող զարգացման ծրագրի վերաբերյալ:

Չափագիտության միջազգային առաջատար փաստաթուղթը թարգմանվել է հայերեն

ՄԱԱԶԿ-ի աջակցությամբ անգլերենից հայերեն է թարգմանվել ՕԻՄԼ Դ 1 Հրատարակություն 2020. «Չափագիտության ազգային համակարգեր ինստիտուցիոնալ և օրենսդրական զարգացում» փաստաթուղթը ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն որակի ենթակառուցվածքներին Հայաստանում» ծրագրի շրջանակում:

Փաստաթղթի թարգմանությունն իրականացվել է Հայաստանի էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի Չափագիտության ազգային ինստիտուտի՝ Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի (ՍՉԱՄ) խնդրանքով:



Պետական և մասնավոր հատվածները ծանոթացել են կարիքների գնահատման հետազոտության արդյունքներին

12, 13 ապրիլ, 2023 – ՄԱԱԶԿ-ն չափագիտության կարիքների գնահատման աշխատաժողով է անցկացրել՝ երկու տեսակամուրջի ձևաչափով, կառավարության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար:

Ավելի քան 20 մասնակից տեսակամուրջի միջոցով հետևել է ՄԱԱԶԿ-ի փորձագետների ելույթներին, որոնք ներկայացրել են կարիքների գնահատման հետազոտության մեթոդաբանությունը, ինչպես նաև հետազոտության՝ արդյունաբերական, իրավական չափագիտության ոլորտի բացահայտումները և բացերը, ինչին հաջորդել է առցանց քննարկում:

Հավելյալ տեղեկության համար կապվել՝
Ծրագրի ղեկավար Ցոնգ Վուի հետ՝ C.WU@unido.org էլ. հասցեով
Ծրագրի ազգային համակարգող Մանե Թափալցյանի հետ՝ m.tapaltsyan@unido.org էլ. հասցեով